



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍՏԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՆ ՈՒ ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆՂԱՄՆԵՐ
 Կ'ԱՅՑԵԼԵՆ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ**

Այս շաբաթավերջին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի այցելէ Լաս Վեկասի մեր ծխական համայնքին:

Կիրակի, 11 Մարտի կ.ե. ժամը 3:30-ին, Լաս Վեկասի Լուտերական եկեղեցւոյ մէջ, Առաջնորդ Սրբազանը Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի փոխանցէ Տնտեսի Կիրակիին խորհուրդը ներկայացնող իր պատգամը: Սուրբ Խորանին պիտի սպասարկէ Գերպ. Ս. Միւռն Շ. Վրդ. Ազնիկեան: Ներկայ պիտի ըլլան նաեւ Ազգ. Վարչութեան անդամներ: Ս. Պատարագի երգեցողութիւնը պիտի կատարէ Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ դպրաց դասը:

Շաբաթ երեկոյեան ժամը 7:30-ին, ի նպաստ Լաս Վեկասի եկեղեցւոյ պայծառութեան, ընդունելութիւն-ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ Լաս Վեկասի Թարխանեան *աքաւտեմիայի* մէջ:

Ձեռնարկը կազմակերպուած է շրջանի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ կողմէ եւ կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը: Ձեռնարկին ներկայ պիտի ըլլան նաեւ Ազգ. Վարչութեան անդամներ:

Պատուոյ հիւրն է Լաս Վեկասի խորհուրդի անդամ Լուիզ Թարխանեան: Գեղարուեստական յայտագիրին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Համազգայինի «Նայիրի» պարախումբը, ներկայացնելով հայկական պարերու փունջ մը:

Առաջնորդ Սրբազան Հօր ու Ազգային Վարչութեան անդամներու Լաս Վեկաս այցելութիւնը առիթ կ'ընծայէ, որ անոնք խորհրդակցական հանդիպումներ ունենան ծխական շրջանի ներկայացուցիչներուն հետ, խորհրդակցելու համար շրջանի անմիջական հարցերուն ու ապագայի ծրագիրներու մասին:

**PRELATE TO CONDUCT HOLY MASS IN LAS VEGAS
 AND MEET WITH THE PARISH**

This weekend, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and representatives of the Executive Council will depart for Las Vegas to visit the parish community. On Sunday, March 11, the Prelate will conduct Holy Mass and deliver the sermon on the Sunday of the Unjust Steward. The Prelate will be assisted at the altar by Very Rev. Fr. Muron Aznikian. Members of the Holy Martyrs Church choir will also participate in the Mass.

On Saturday evening, the Prelate and Executive Council members will attend a reception dinner organized by the parish board, during which Las Vegas Councilwoman Lois Tarkanian will be honored.

ՀՐԱՆՂ ՏԻՆՔԻ ԶԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ ՀՈԳԵՅԱՆԳԻՍՏ ՄԵՐ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ, ԵՒ ՅՈՒՇԱՅԱՆԴԵՍ

Ծանօթ է որ Պոլսոյ «Ակօս» շաբաթաթերթի խմբագիր Հրանդ Տինք Ուրբաթ, 19 Յունուարի կեսօրին, սպանուեցաւ իր թերթի խմբագրատան մուտքին:

Օրին, Թեմիս բարեխամ Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, մեր բոլոր եկեղեցիներուն մէջ աղօթք բարձրացուցիւք՝ ի հանգիստ հանգուցեալ նահատակին, ինչպէս նաեւ մասնակից եղանք համագաղութային յուշահանդէսին:

Արդէն քառասուն օրեր անցած են ողբերգական այդ օրէն: Առ այդ, Թեմիս բարեխամ Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, Կիրակի, 11 Մարտին, Հրանդ Տինքի քառասունքին առիթով, յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան յատուկ պաշտօն պիտի կատարուի Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ:

Նոյն օրը, յետմիջօրէի ժամը 5էն 7, Կլենտէյլ քաղաքի Civic Auditoriumի սրահին մէջ տեղի պիտի ունենայ համահայկական ոգեկոչման յուշահանդէս: Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան ներկայ պիտի ըլլայ յուշահանդէսին, ընկերակցութեամբ հոգեւոր հովիւներու:

REQUEIM SERVICE AND MEMORIAL TRIBUTE TO HRANT DINK

By the ordinance of the Prelate, on Sunday, March 11th, requiem service will be offered in all Prelacy churches on the 40th day of the assassination of Hrant Dink.

On the afternoon of the same day, a community memorial tribute will take place at the Glendale Civic Auditorium. Very Rev. Fr. Barthev Gulumian will represent the Prelate, accompanied by Prelacy parish pastors.

ՄԻՋԻՆՔԻ ԱՌԻԹՈՎ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՆԱԽԱԳԱՅԷ Ս. ԽԱՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՐԵՒԱԳԱԼԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Յառաջիկայ Չորեքշաբթին, Մարտ 14-ը Միջինք Է: Առաջնորդ Սրբազանը այդ օրը պիտի նախագահէ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Արեւագալի արարողութեան: Առաջնորդ Սրբազան Հօր պիտի ընկերանան Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչները՝ Գերայ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան, եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւները:

Եկեղեցական արարողութենէն ետք, եկեղեցւոյ «Բաղրամեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ Միջինքի ճաշկերոյթ, նախագահութեամբ եւ ներկայութեամբ Առաջնորդ Սրբազանին: Ծաշկերոյթը կազմակերպուած է Ս. Խաչ Մայր Տաճարի Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ:

Միջինքի առիթով, նմանօրինակ հանդիսութիւններ կազմակերպուած են նաեւ մեր թեմի ծխական բոլոր շրջաններուն մէջ:

PRELATE TO PRESIDE OVER SUNRISE SERVICES AND MICHINK LUNCHEON AT HOLY CROSS CATHEDRAL

On Wednesday, March 14, the median day of Lent, the Prelate will preside over sunrise services at Holy Cross Cathedral in Montebello, assisted by Christian Education Department Co-Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian.

Following services, a luncheon has been organized on this occasion by the parish Ladies Auxiliary at “Bagramian” Hall. On this day, similar such events will take place at all Prelacy churches.

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Շաբաթ, Մարտ 10, յետ միջօրէին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արմենակ Տեր Պետրոսեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ երիտասարդաց խմբակի հերթական հանդիպումն ու դասախօսական հաւաքը: Հոգ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան պիտի ներկայացնէ «Տագնապի մէջ ի՞նչպէս երիտասարդը կրնայ Տէրը գտնել» նիւթը: Դասախօսութեան ներկայ պիտի ըլլան Թեմիս եկեղեցիներու երիտասարդացի խմբակներու անդամները: Դասախօսութեան աւարտին ներկաներուն առիթ պիտի տրուի հարց ու պատասխանի:

GLENDALE ACYA GATHERING AND LECTURE

The Armenian Church Youth Association (ACYA) Glendale chapter has organized a youth gathering and lecture to take place at “Armenak Der Bedrossian” Hall of St. Mary’s Church on Saturday, March 10th. Very Rev. Fr. Barthev Gulumian will speak on the topic “How the youth can find God in a crisis”. All Prelacy youth group members are invited to attend. A question and answer session will follow the lecture.

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԻ ՈՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԺՈՂՈՎ

Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու Կիրակնօրեայ վարժարաններու յանձնախումբի հերթական ժողովը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Մարտ 10-ին, կէսօրէ ետք ժամը 2:30-ին, Էջմիածնական Թեմի Առաջնորդարանին մէջ, Պըրպէնք:

Ժողովին, պիտի քննարկուի յառաջիկային կայանալիք Կիրակնօրեայ վարժարաններու աշակերտներու միացեալ ձեռնարկը:

Յայտնենք, որ Առաջնորդ Սրբազան Զօր տնօրինումով այս ժողովին ներկայ պիտի ըլլայ Ազգային Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան:

ORIENTAL ORTHODOX SUNDAY SCHOOLS MEETING

The regular meeting of the Oriental Orthodox Sunday School committee will convene on Saturday, March 10th, at 2:30 p.m., at the Western Diocese headquarters in Burbank. The committee will examine issues relating to upcoming joint Sunday School student gatherings.

By the ordinance of the Prelate, Very Rev. Fr. Muron Aznikian will attend the meeting.

Ի ՊԱՏԻ ԵՐԵՔ ԱՐԺԱՆԱՒՈՐՆԵՐՈՒ

Հայ Ամերիկեան Առևտրական Գրասենեակի (Armenian American Chamber of Commerce)-ի 4-րդ տարեդարձին առթիւ, Ուրբաթ, Մարտ 9-ին, երեկոյեան ժամը 7-ին, ճաշկերոյթ մը տեղի ունեայ Զալիֆորնիա Փլազայի՝ Omni Los Angeles պանդոկին մէջ: Ծաշկերոյթի ընթացքին պիտի պատուըուին երեք անձնաւորութիւններ, որոնք պատուաբեր պաշտօններու հասած են կեանքի ասպարեզին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Վազգէն Քիւյ. Աթմաճեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին, փոխանցելու Առաջնորդ Սրբազան Զօր օրինութիւններն ու շնորհաւորութիւնները պատիւի արժանացող ազգայիներուն՝ Տիկին Սօնա Մեծատուրեան-Գրոյի, Եւ Տեարք Վահագ Յովնանեանի ու Յակոբ Պաղտասարեանի:

PRELATE REPRESENTED AT THE ARMENIAN AMERICAN CHAMBER OF COMMERCE AWARDS GALA

On Friday, March 9th, the 4th annual business awards gala of the Armenian American Chamber of Commerce will take place at the Omni Los Angeles Hotel at the California Plaza. During the banquet, Mrs. Sona Medzadourian-Crow, Mr. Vahak Hovnanian, and Mr. Hacop Baghdassarian will be honored as businesspersons of the year.

Rev. Vazken Atmajian, Pastor of St. Mary's Church, will attend and convey the Prelate's blessings and congratulatory remarks.

ՇՈՒՇԻԻ «ԴԱՆԻԷԼ ԴԱԶԱՐԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻՆ

Ուրբաթ, Մարտ 9-ին, երեկոյեան ժամը 8-ին, Շուշիի Դանիել Դազարեան Երաժշտական դպրոցի 4-րդ տարեկան ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ Միշըն Զիլզի «Արարատ» Տան Տօքմէճեան սրահին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր Արժ. Տ. Վիգէն Ա. Քիւյ. Վասիլեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ փոխանցելու Առաջնորդ Սրբազան Զօր օրհնութեան եւ գնահատանքի խօսքը:

PRELATE REPRESENTED AT THE SHOUSHI SCHOOL OF MUSIC BANQUET

The fourth annual banquet of the Shoushi Daniel Ghazarian School of Music is scheduled to take place on the evening of Friday, March 9th, at Deukmejian Hall of Ararat Home in Mission Hills.

Archpriest Fr. Vicken Vassilian, Pastor of St. Garabed Church, will represent the Prelate and convey his blessings and best wishes.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org, Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.